



Հունիսի մեկին Նինոծմինդայի շրջանի Սաթխա գյուղում հանդիսավորությամբ նշվեց Սաթխայի հերոսամարտի 95-րդ տարեդարձը:

1917 թ-ի դեկտեմբերի 5-ին՝ Թուրքիայի հետ զինադադարի պայմանագիր կնքելուց հետո, ռուսական զորքերը սկսել են հեռանալ ռազմաճակատից՝ Նինոծմինդա շրջանից, իսկ հայերն ու վրացիները մնացել են մենակ՝ թուրքական հզոր բանակի դեմ, որը որոշ ժամանակ անց հարձակում է գործել՝ նպատակ ունենալով նվաճել ամբողջ Անդրկովկասը:

Հենց այս հարձակումը կանխել են Սանթխայի, Ախալքալաքի, ողջ Ջավախքի հայերը, որոնց միացել են նաև տեղի վրացիները, և Սաթխայում մի քանի անգամ թշնամուն պարտության մատնելուց հետո, թուրք հրոսակներին ստիպել են հեռանալ տարածաշրջանից: Հունիսի 1-ը պաշտպանների տված վերջին ճակատամարտի օրն է:

Այդ օրվան նվիրված միջոցառումը, որ հաստատվել է Վրաստանի անկախության տարիներին, 2003 թվականին հիմնադրել է Սանոսյան ընտանիքը՝ Արամ Սանոսյանի գլխավորությամբ: Ավանդական դարձած տոնական օրը կրկին բազմամարդ էր Սաթխայի հերոսամարտի հուշարձանի մոտ: Հավաքվել էին ինչպես Սաթխայի, այնպես էլ հարակից գյուղերի բնակիչներ, հյուրեր Թբիլիսիից և Վրաստանի այլ վայրերից: Միջոցառմանը իրենց ներկայությունն էին բերել Հայաստանից ժամանած հյուրերը: Հանդիսությանը ներկա էին

Միջոցառումն սկսվեց գյուղի «Սուրբ Մեծն Ներսես» եկեղեցում հոգեհանգստյան արարողությամբ, որը հանդիսապես եղավ Վիրահայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը, մասնակցությամբ փոխառաջնորդ Տեր Բաբգեն աբեղա Սալբիանի:

Ծաղիկներ և ծաղկեպսակներ զետեղվեցին հերոսամարտի հուշարձանի պատվանդանին, որից հետո սկսվեց տոնական հանդիսությունը: Այն վարում էր Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Գևորգ Սնիսյանը:

Խոսքով հանդես եկան պատմական գիտությունների թեկնածու Արտյուշա Սանոսյանը, արվեստի և մշակույթի գործիչներ, հյուրեր:

Միջոցառման գեղարվեստական մասը ապահովել էին Նինոծմինդայի և Ախալքալաքի մշակույթի բաժինները՝ երգի-պարի խմբերի մասնակցությամբ:

Հանդիսության ավարտին օրհնության խոսքով հանդես եկավ Վիրահայոց Թեմի առաջնորդ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը: Նա շնորհավորեց տոնը, բարձր գնահատեց Սանոսյան ընտանիքի ազգանվեր աշխատանքը և ոգեկոչեց նահատակների հիշատակը:

Միջոցառման ընթացքում կազմակերպվել էին ծիարշավի, շախմատի մրցումներ, սպորտային այլ խաղեր:

Հանդիսության ավարտին տեղի ունեցավ մատաղի օրհնություն և հյուրասիրություն:



